ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2023 թվականի մայիսի 3-ին

«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 9-րդ և 15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ կետով.

«20) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Գիտության կոմիտեն և Բարձրագույն որակավորման կոմիտեն միաձուլել՝ ստեղծելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատվում է սույն օրենքով վերակազմակերպված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նոր կանոնադրությունը:

4. Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2023 թ. մայիսի 29
Երևան
ՀՕ-157-Ն

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 09.06.2023